Գլաձորի դպրոցի գրչութեան գլուխ գործոցն է մեր տեսածների մէջ Եսայի Նչեցու Աստուածաշունչը. գրիչներն են Կիրակոս (պատկ. 210) եւ Յովհաննէս (պատկ. 211) Երզնկացիները, նախընթաց ձեռագրի մեզ յայտնի ստացողներն ու գրիչները, բայց և մատենագիր Յովհաննէս Երզնկացի, որ Ծործորեցի էլ է կոչւում (պատկ. 212), Ծործորի վանքում այդ ժամանակները բնակուած լինելու պատճառով. ճոխութեամբ նկարազարդողն է Թորոս Տարոնեցին: Մի տեղ միայն յիշուած է ոմն Ստեփանոս, բայց նորա մաս-



Պատկեր 209.

նակցութիւնը իրապէս չի նկատւում. «ՁՍտեփ. աղաչեմ յիշել ի տր.» 113ա.: Կիրակոսի յիշատակութիւնն ունինք 512բ., 541բ., իսկ Յովհաննէս գրչինը 550բ., Յովհաննէս Երզնկացի մատենագրինը, Ծործորեցուն 588բ., որ սքանչելի գեղագիր էր միևնոյն ժամանակ (պատկ. 212). «Զտ͞ծ եղէն զանձիս ստացօղն զերջանիկ վարժապետն Եսայիաս յիշեսջիք ի Քս.: Ընդ սմին և զնուաստ գծօղ սորին զՅոհ. սպասաւոր բանի Եզնկայեցի, որ եւ Ծործորեցի հանդերձ ծնողօք: Որ եւ գրեցի զսա յըստ մեզ մարդեղութե. թուին Յի. Քի. տն. մերոյ ՌԳՃ եւ ԺԸ: եւ ըստ Խոսրովային տոմարին: ՉԿէ» (= 1318)(*): Սորա տակ աւելացրած է



Պատկեր 210.

Թորոս նկարչի ձեռքով. «Եւս եւ զանարժան նկարող զԹոր.» եւ «զծնաւղն մեր» (բոլոր յիշատակարանները տ. Յաւել. Բ. 81):

ռագիրը գրուած է Թորոս և Մանուէլ գրիչների ձեռքով. Թորոսի աշակերտներն են Յովհաննէս և Գրիգորէս: Հետաքրքրական է զաւասաց վարդապետների պատմութեան համար Կիրակոսի և Մկրտիչ վարդապետների պատկերներն իրենց աշակերտներով (160բ), բայց ոչ բարձր արուեստի գործ: Այս ձեռագրի մէջ «ի սկզբանն զաղխաակս կարգաւորութե. բանկց. զօրացն հաոց ը. ազգի և տոհմի իւրեանց», որ կիսատ է, մի թերթ միայն մնացած լինելով, ուր կայ հետեւեալ յիշատակարանը. «Յիշեա Քս. ԱԾ զմեղուցեալ ծառայքս զԿիրակոս վարդապետ և զՅովանէս վզ. և զներսէս հոգեոր որդեակն մեր, ի քում գալստեանդ և քեզ փառք»:

Կիրակոս և Յովհաննէս վարդապետների գործունէութիւնն այստեղ բաւական երկար է տեւել. Էջմ. № 94/3276, 190 յիշատակարանի համեմատ նրանց աշակերտներից մէկը՝ Ստեփանոս երէց Երզնկայում, «ընդ հովանեաւ սբ. տճրիս., որ ծառով սբ. Յակոբ կոչի» ՊԴ (= 1355) թուին գրել է մի կանոնագիրք «ի վայելումն և յշտկ. Գրգր. արեղային, գրոց աշկերտի. և բանի սպասաւորի ի յիշատակ ծնողաց և սբ. րաբունապետաց իւրոց Կիւրակոսի և Յովանիսի»:

Կիրակոս Երզնկացին յայտնի է և իբրև մատենագիր և բանաստեղծ. Էջմ.ի № 1982/1980, 105բ. յիշատակարանից երեւում է, որ նա «յետինս ի վարժապետաց Կիւրակոս, ի յութն հարիւր և յերեք թուականիս Հայոց (= 1354) արարի զվերլուծութի. հարիւրօորաց սբ. հօրն Եւագրիս»: Կիրակոսի անունով կան քարոզներ և ճառեր. այսպէս Էջմ.ի № 2239/2187, 105ա., գրուած ՉՂԵ (= 1346) թուին, «ի բանն, որ ասէ Զայն տն. ի վերայ ջուրց». Սկս. «Արուեստաւորք և մակացուք». վերնագրուած է՝ «Կիւրակոսի վդի. Եզնկեցոյ արարեալ»: Նոյն Ձեռագրի մէջ 244ա. «Նախերգան Տն. առաջին (s!) Կիրակոս վրդպտի. արարեալ»: Սորանն է նաև «Արեւելք գերարփին» շարականը: Ունի կանոնական, ընդհանրական խրատներ. «ի Կիրակոս վարդապետէ Երզնկացւոյ Արեւելք ասողէ, զնւագրեալ լուծմունքն պարզողէ» եւն., Սկս. «Յայ. ամենակալէն աւրհնութի. . . .»: Ձեռ. Էջմ. № 3527, 1446ա. (տես նաև № 2542, ուր կան և ուրիշները նորա գրուածներից):

(*) Այս Յովհաննէս Երզնկացին Վարդանի աշակերտ էր, մէկը մեր բազմաշխատ մատենագիրներից և ընտիր գրիչներից: Տեղը չէ և ոչ հնարաւոր է տալ նորա կեանքի և գրական ընդարձակ գործունէութեան նոյն իսկ ուրուագիծը, բայց բազմաթիւ են նորա աշխատութիւնները գիտական, մատենագրական, բանաստեղծական և թարգմանական ասպարիզում: Նա եղել է իւր ժամանակի բոլոր հոգեոր կեդրոններում Տփխիսից սկսած մինչև Հռոմկլայի հայրապետանոցը և Կիլիկիայ արքունիքը, ամեն տեղ վայելելով իւր ընդունակութիւններին համապատասխան պատիւ և յարգանք: Այս գլխի մէջ յաճախ առիթ կ՚ունենանք յիշելու նորա անունը, որչափ կապուած է Գլաձորի հետ: